

«100+ փոփոխություն Գեղարքունիքի մարզում»

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը ամփոփում է աշխատանքային գործունեության 1 տարին

Կարճ փաստեր Գեղարքունիքի մարզի կենսագործունեության տարբեր ոլորտներում իրականացված ծրագրերի, գրանցված ձեռքբերումների, առաջընթացի, համագործակցությունների վերաբերյալ:

1. 2019թվականի բյուջետային տարվա սկզբին մարզի **44** դպրոցներում կատարվել է աշխատավարձի բարձրացում՝ միջին մակավարժական դրույքի մինչև **10%-ի** չափով, ընդհանուր **1722 աշխատողի** (դպրոցներում աշխատողների թիվը կազմում է 4414 մարդ, որից միայն մանկավարժ 2942) կամ ընդհանուր աշխատողների **39%-ը**, որից՝
 - **11** դպրոցում միայն վարչական աշխատողների (**33 աշխատողի**) աշխատավարձի բարձրացում է կատարվել.
 - **33** դպրոցներում բոլոր աշխատողների նկատմամբ է (**1689 աշխատող**) աշխատավարձի բարձրացում կատարվել.
 - **21** ուսումնական հաստատություններում ավելացվել են տնտեսավարների հաստիքներ՝ շուրջ **18 դրույքով:**
2. Մեկ տարվա ընթացքում **61** դպրոցներում կատարվել են **219 մին 162 հազար դրամի** շինարարական-վերանորոգման աշխատանքներ, ձեռք է բերվել շուրջ **38 միլիոն 499 հզ. դրամի** գույք և սարքավորումներ, նույն թվում ինժեներական լաբորատորիաների համար՝ **16 551.0 հզ. դրամի:**
3. Մարզի **6 դպրոցում** 2019-2020 ուսումնական տարվանից գործում են «Արմաթ» Ինժեներական լաբորատորիաներ, որտեղ հաճախում են շուրջ **160 աշակերտ:** Ընդհանուր **45** դպրոցում գործում են «Արմաթ» Ինժեներական լաբորատորիաներ՝ 112 խմում հաճախում են շուրջ 1200 աշակերտ:
4. 2019-2020 ուսումնական տարվանից մարզի **Նորաշեն, Զուլաքար, Մարտունի և Գավառ** համայնքներում գործում են **5** նոր նախակրթարաններ: Նախակրթարանները հիմնվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի միջոցներով և համայնքների մասնակի ներդրումներով, բացառությամբ Նորաշենի նախակրթարանի, որտեղ ներդրումը ամբողջովին կատարվել է պետության կողմից:
5. 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում որոշակի աշխատանք է տարվել դպրոցները մանկավարժական կադրերով համալրելու ուղղությամբ: Առաջացած մանկավարժական թափուր տեղերը համալրվել են մրցույթային կարգով և **24 դպրոցում** անցկացված մրցույթների (այդ թվում՝ կրկնակի և բազմակի մրցույթներ) արդյունքում նշանակվել է **27 ուսուցիչ:**

6. «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի հետ համագործակցելով՝ 2018-2019 ուսումնական տարում մարզ է գործուղվել **7 ուսուցիչ**, իսկ 2019-2020 ուս. տարում գործուղվել են ևս **5-ը**, որոնք դասավանդում են Արտանիշի (ֆրանսերեն), Կալավան (անգլերեն), Ջիլի (կենսաբանություն), Դրախտիկի (անգլերեն) միջնակարգ և Վարդենիկի N 1 (աշխարհագրություն) հիմնական դպրոցներում:
7. ՀՀ պետական բյուջեով հիմնանորոգվում են **2 դպրոց**՝ Զուլաքարի թիվ 2 եւ Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցները:
8. Ասիական զարգացման բանկի միջոցներով կառուցվում է Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոցը:
9. Ասիական զարգացման բանկի միջոցներով նախատեսվում է կառուցել նաև Ճամբարակի թիվ 1 եւ Գեղհովիտի թիվ 2 դպրոցները: Ավարտվել են դպրոցների նախագծահաշվարկային փուլը:
10. «Փոքրաքանակ երեխաներով (մինչև 100 աշակերտ) համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցում» ծրագրով մարզում կառուցվելու է **3 նոր դպրոց՝ Լեռնահովիտի, Շասջրեքի եւ Ջիլի** միջնակարգ դպրոցները: Այժմ աշխատանքներ են տարվում ճշգրտելու կառուցվելիք մոդուլային շենքերով հանրակրթական դպրոցին անհրաժեշտ հիմնական միջոցների (դպրոցական, մարզական և վարչական մասի գույք, կահույք, էլ. սարքավորումներ և այլն) կազմն ու քանակն:
11. 2019-2020 ուսումնական տարում **Վարդենիսի N 2, 3, 4 հիմնական դպրոցները** հեղուկ վառելանյութից կանցնեն գազով ջեռուցման:
12. Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցն հրատարակում է «1+1» դպրոցական թերթ: Թերթը հիմնվել է բարերարի միջոցներով: Խմբագրական աշխատանքներին ակտիվորեն աջակցում է «Գեղամա աշխարհ» մարզային թերթի խմբագրությունը:
13. Սևանի բժշկական կենտրոնում տեղադրվել է **համակարգչային շերտագրման սարք**, որն իր նշանակությամբ առաջինն է ՀՀ Գեղարքունիքի մարզում:
14. «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ն ձեռք է բերել **էնդոսկոպիկ վիրահատական սարք**, որը թույլ է տալիս իրականացնել էնդոսկոպիկ վիրահատություններ հենց տեղում՝ բարձրացնելով բժշկական օգնության և սպասարկման որակը մարզում:
15. «Մարտունու հիվանդանոց ԲԿ» նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում **հեմոդիալիզի ծառայության** բացման ուղղությամբ:
16. «Վարդենիսի հիվանդանոց» ՊՓԲԸ-ն նվիրատվությամբ ձեռք է բերել «Humalizer Philanthropy» **բիոքիմիական անալիզատոր սարքավորում**: Այն հնարավորություն է տալիս տեղում իրականացնել բիոքիմիական անալիզները՝ բարձրացնելով բժշկական օգնության եւ սպասարկման որակը տարածաշրջանում: Ինչպես նաև հիվանդանոցն ապահովվել է **արեւային էլեկտրակայանով**՝ 5 կիլովատ ժամ հզորությամբ:

17. «Մարտունու ծննդատուն» ՊՓԲԸ **9,5** մլն դրամ արժողությամբ **ուլտրաձայնային հետազոտման սարք** է ձեռք բերում: Մրցույթը արդեն կայացել է:
18. Ավարտվել են «Մարտունու հիվանդանոց ԲԿ» ՓԲԸ-ի նոր մասնաշենքի նախագծանախահաշվային փաստաթղթերը և նոյեմբերից սկսվելու է **նոր մասնաշենքի** կառուցման աշխատանքները:
19. «Վարդենիսի հիվանդանոց» ՊՓԲԸ-ն 2019 թվականի առաջին եռամսյակում ունեցել է 3,299,300 դրամի պարտք: Իրականացված միջոցառումների և առողջացման բարեփոխումների շնորհիվ 01.09.2019թ-ի դրությամբ հիվանդանոցը աշխատել է շահույթով և գործունեության ընթացքում ձևավորվել է 3,150,000 դրամի շահույթ:
20. 2018 թվականի հոկտեմբեր ամսից մինչև ընթացիկ տարվա սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ընտանեկան եւ սոցիալական նպաստ ստացող ընտանքիներից այդ ժամանակահատվածում կրճատվել է **983** ընտանիք: Համեմատության համար նշենք, որ 2018թ-ին նպաստ համակարգում գրանցված է եղել 12010 ընտանիք, 2019թ-ին արդեն 11027: ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի Սեւանի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի, Ճամբարակի ՍԱՏԳ-ների համակարգող խորհուրդների եւ ՍԱՏԳ-ների մասնագետների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում դադարեցվել է **Սեւանում 49-ը, Գավառում՝ 136, Մարտունիում՝ 432, Վարդենիսում՝ 298 եւ Ճամբարակում 68** ընտանիքների ընտանեկան նպաստի իրավունքները:
21. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետները մասնակցել են բարդ և խնդրահարույց **6 դեպքի** քննարկման: Այցելել մարզի 11 համայնք, մասնակցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին: Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող **շուրջօրյա հաստատություն է տեղավորվել 8 երեխա, հաստատություններից ընտանիք է վերադարձել 11 երեխա, 1-ը՝ գիշերօթիկ հաստատությունից:** Մարզում չկան մուրացիկ կամ թափառաշրջիկ երեխաներ:
22. Համայնքներում վարչական վերահսկողության շրջանակներում մարզի **16 համայնքներում** (Վարդենիս եւ Գեղամասար խոշորացված համայնքներ) կատարել է ուսումնասիրություններ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, օգտագործման տրամադրման օրինականության ապահովման ուղղությամբ: Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է շուրջ **1500հա** դասական նշանակության հողամասերի առանց սահմանված կարգով

վարձակալական պայմանների կնքման օգտագործման դեպքեր: Կոտայքի մարզի եւ Գեղերքանուքի մարզի սահմանների ճշգրտման արդյունում շուրջ **200 հա**-ով ավելացել է Գեղարքունիքի մարզի տարածքը: Գեղարքունիքի մարզը այժմ 535131,8 հա է:

23. Մարզպետարանի կողմից համակարգվել է Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի միջոցներով մարզի **15 համայնքներում** կառուցվող **ֆուտբոլի մինի խաղադաշտերի** կառուցման համար անհրաժեշտ փաստաթղթերի կազմման և հողամասերի ընտրության աշխատանքներ:
24. ՀՀ Կառավարության առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծմանն նպատակով 2019թ. իրականացվում են **16 հրատապ լուծում պահանջող ծրագրեր**, որոնց ընդհանուր գումարը կազմում է **428.7 մլն.դրամ**: Ներկա պահին ավարտվել են Գագարինի միջնակարգ դպրոցի տանիքի վերանորոգման (15.5 մլն.դրամ) և Սևան քաղաքի N5 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման շինարարական աշխատանքները (41.0 մլն.դրամ), իսկ մնացած աշխատանքները ընթացքի մեջ են:
25. 2019 թվականի ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ իրականացվում են **7 ճանապարհների հիմնանորոգման և միջին նորոգման աշխատանքներ**: Այս ծրագրերով մինչև ընթացիկ տարվա ավարտը կհիմնանորոգվի շուրջ **37 կմ տարբեր նշանակության ավտոճանապարհ**, որի ներդրումը կազմելու է **3558.4 մլն.դրամ**: Միջին նորոգումների ժամանակ առաջացած շուրջ **14000 խորհանարդ մետր ֆրեզված հին ասֆալտբետոնյա խառնուրդը տրամադրվել է 34 համայնքների ներհամայնքային փողոցները բարեկարգելու համար**:
26. 2019 թվականի ընթացքում իրականացվել և իրականացվում են մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված **103 սուբվենցիոն ծրագիր**, որոնց նախնական ընդհանուր գումարը կազմում է **5 միլիարդ 182 միլիոն 480հազար 800 ՀՀ դրամ**: Ծչագրերի հիմնական ուղղվածություններն են՝
 - *ոռոգման ցանցի կառուցում՝ 17*
 - *մանկապարտեզների հիմնանորոգում՝ 5*
 - *ներհամայնքային փողոցների ասֆալտապատում և մայրերի նորոգում՝ 36*
 - *մանկապարտեզների կառուցում՝ 2*
 - *մշակույթի տների հիմնանորոգում՝ 2*
 - *մշակույթի տների կառուցում՝ 1*
 - *արտաքին լուսավորության ցանցի կառուցում՝ 13*
 - *արտաքին գազատարի կառուցում՝ 2*
 - *խմելու ջրի ջրատարի հիմնանորոգում և կառուցում՝ 13*
 - *բազմաբնակարան շենքերի հիմնանորոգում՝ 2*
 - *հանդիսությունների սրահների հիմնանորոգում՝ 3*
 - *պուրակների և խաղահրապարակների կառուցում՝ 4*
 - *վարչական շենքերի և թանգարանի վերակառուցում՝ 2*
 - *շատրվանային համակարգի կառուցում՝ 1*

27. Մայիսի 11-ին մարզում անցկացվեց «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի» բիզնես համաժողովը: Համաժողովի ընթացքում ներկայացվեցին մարզում ընթացքի մեջ գտնվող **7 եւ 18 ներդրումային ծրագրերի նոր գաղափարներ** (ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության հարթակում տեղադրվել են շուրջ 50 ներդրումային ծրագիր): Այս ընթացքում արդեն գործարկվել է **Լանջաղբյուրի ֆերմերային տնտեսության ծրագիրը**, կարգարվորվում են **«Ասպ» հեծյալ ակումբի տարածքի հարցերը**: Օտարերկյա ներդրողների հետ ընթանում է ակտիվ համագործակցություն:
28. Համագործակցության արձանագրություն է ստորագրվել Արաբական Միացյալ Էմիրություններում գործող «Ռոյալ ֆրոնտ» ներդրումային ընկերության հետ: Կազմակերպության ներկայացուցիչները մասնակցել են «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի» բիզնես համաժողովին: Ներդրումային ծրագրեր իրականացնելու շուրջ ակտիվ բանակցություններ են ընթանում:
29. Գեղարքունիքի մարզպետարանի նախաձեռնությամբ սեպտեմբերի 14-ին մարզում առաջին անգամ անցկացվել է «**Էկո Ֆիշ Ֆեստ**» փառատոնը:
30. **17 տարվա** ընդմիջումից հետո Ճամբարակի տարածաշրջանում ցանվեց աշնանացան ցորեն: 45 հողօգտագործողների՝ մինչև 7 հա ցանքի համար, 1-ին անգամ հասկացվեց շուրջ **3 մլն.դրամ աջակցություն**՝ 49.2 հեկտար փաստացի ցանքի դիմաց, /1 հա-ի հաշվով 60 հազ. դրամ/:
31. Լիզինգի պետական աջակցության ծրագրով մարզի գյուղացիական տնտեսություններին տրամադրվեց **50 միավոր գյուղ. տեխնիկա**, որից՝ **29 տրակտոր և 21 գյուղ. գործիքներ**, իսկ գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության զարգացման ծրագրով 11 համայնքների արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին՝ **53 միավոր, /23 անիվավոր տրակտոր, 30 գյուղ. գործիքներ/, 6** համայնքներում կառուցվել է **16.5 կմ ջրագծով տեղադրվել է 10 խմոց, 5 փարախ** :
32. «Հայաստան ծառատունկ» ծրագրերի շրջանակներում 2018թ. աշնանը մարզի մի շարք համայնքներում տնկվել է շուրջ **2194 հատ բույս՝ դեկորատիվ ծառ և թուփ**: Նույն ծրագրի շրջանակներում 2019թ.գարնանը տնկվել է **3637 ծառ և թուփ**: Ընդհանուր տնկվել է մոտ **5831 հատ ծառ ու թուփ**: Խոր աշնանը կշարունակվեն ծառատնկման աշխատանքները:
33. 2019 թվականի սեպտեմբեր ամսվանից սկսվել է Սևանա լճի **Վարդենիսի տարածքի ջրածածկման ենթակա (ճահճացված) տարածքների մաքրման աշխատանքները**:
34. Պետական բյուջեի հաշվին նախատեսվող ներդրումային ծրագրերի մեջ ներառել են **Մարտունի, Վարդենիս, Գավառ քաղաքների կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանների կառուցման ծրագրերը**:
35. Մարզում նախկինում փաստագրված 138 աղբանոց-աղբակույտերից **109-ը** փակվել է: Մարզի տարածքում առկա են **29** օրինական աղբավայրեր:

36. 2018թ-ին մարզի միայն 31 համայնքում էր իրականացվում կանոնավոր աղբահանություն: Համայնքապետարանների հետ ինտեսիվ աշխատանքների արդյունքում 2019 եւս **10** համայնք կատարում է աղբատանություն, դառնալով 41-ը:
37. Մեկ տարվա ընթացքում մարզում անցկացվել է **3 համապետական եւ համամարզային շաբաթօրյակ:**
38. Աշխատանքային գործունեության 1 տարվա ընթացքում կնքվել է **79 աշխատանքային և ժամկետային աշխատանքային պայմանագիր՝** Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ եւ ՊՓԲԸ տնօրենների հետ:
39. Հայտարարվել է **45 մրցույթ՝** Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ և ՊՓԲԸ տնօրենների թափուր պաշտոնների համար, մրցույթին մասնակցելու համար դիմել են **83 քաղաքացի:**
40. Կնքվել է **10 ժամկետային աշխատանքային պայմանագիր** քաղաքացիական ծառայության թափուրը պաշտոնը զբաղեցնելու համար
41. ՀՀ քաղաքացիական ծառայության մասին օրենքով սահմանված կարգով անցկացվել է **7 ծառայողական քննություն:**
42. 2018 թվականի դեկտեմբերին ֆինանսական աջակցություն է տրվել 2016թ.-ի ապրիլյան պատերազմում և դրանից հետո զոհված և վիրավորված **29 ընտանիքների,** ինչպես նաև **19** այն ընտանիքներին, որոնցում 2 կամ 3 երիտասարդ միաժամանակ ծառայում են Հայկական բանակում:
43. 2019 թվականի ապրիլին ֆինանսական աջակցություն է տրվել 2016թ.-ի ապրիլյան պատերազմում զոհված **5** զինծառայողների ընտանիքներին:
44. Գեղարքունիքի մարզպետարանի, մարզային ենթակայության կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության առավել արդյունավետ ապահովման նպատակով գործունեության հենց առաջին օրերից մարզպետարանի պաշտոնական կայքի, մարզային թերթի և հեռուստաընկերությունների շարքում ստեղծվել և գործում է նաև **մարզպետարանի ֆեյսբուքյան էջը:**
45. Աշխատանքային գործունեության մեկ տարվա ընթացքում մարզպետարանին ենթակա 13 կառույց ենթարկվել է ներքին աուդիտի՝
- Մարտունու սոցիալական աջակցության տարածքային գործակալություն
 - Վարդենիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն
 - «Սարուխանի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ
 - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչություն
 - «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն
 - «Վարդենիսի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերություն

- Սևանի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն
- Գավառի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն
- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի գնումների գործընթացի կազմակերպում
- « Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
- «Արծվանիստի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ
- « Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
- «Կարճաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Իրականացված աուդիտների ընթացքում գնահատվել են ներքին հսկողության և ռիսկերի կառավարման գործընթացները, դրանց հուսալիությունը և արդյունավետությունը: Աուդիտների ընթացքում համապատասխան ընթացակարգերով աուդիտի են ենթարկվել տարբեր գործառույթներ՝ այդ թվում գործառույթների համապատասխանությունը օրենսդրության պահանջներին, աշխատավարձերի հաշվարկման և վճարման ճշտությունները, կատարված գնումների ընթացակարգերի համապատասխանությունը օրենսդրության պահանջներին, եկամուտներին և ծախսերին արդյունավետությունը, ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, հարկերի վճարումները և այլն: Վերլուծվել են առանձին գործառույթների հուսալիությունը և բարելավման ուղիները: